Զեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2020 թ. բյուջեի վարչական և ֆոնդային մասերում փոփոխություններ կատարելու մասին

Համայնքի 2020 թվականի բյուջեի վարչական և ֆոնդային մասերի տարեսկզբի մնացորդները համայնքի բյուջեի ֆոնդային մասի եկամուտներում ներառելու համար անհրաժեշտ է ֆոնդային մասի մուտքերը ավելացնել 240 077 472 դրամի չափով, որից՝ վարչական մասից մնացորդը կազմում է՝ 84 946 738 դրամ, ֆոնդային մասից՝ 155 130 734 դրամ:

Համայնքի բյուջեի Ֆոնդային մասում ավելացված 240 077 472 դրամ մուտքերի հաշվին նախատեսվում է կատարել հետևյալ կապիտալ ծախսերը՝

	Անվանում	*գումար հազ. Դրամ*
1	Ծառայողական տրանսպորտային միջոցի ձեռք բերում	2500.0
2	Քաղաքապետի հանգստի սենյակի համար կահույքի ներկառուցման աշխատանքների և քաղաքապետարանի աշխատակիցների հաճախումների համակարգի ձեռք բերում	1340.0
3	Ավտոճանապարհային նշանների տեղադրման և Ճանապարհների գծանշման նախագծա-նախահաշվային աշխատանքների ձեռք բերում.	70.0
4	Հանգստի տաղավարների ձեռք բերման նախագծա-նախահաշվային աշխատանքներ	90.0
5	Մասիս քաղաքի թիվ 7 մանկապարտեզի, թիվ 2 մանկապարտեզի մասնաշենքի, թիվ 4 մանկապարտեզի մասնաշենքի տանիքի մասնակի, 1 խմբասենյակի, սան հանգույցների և միջանցքի, թիվ 5 մանկապարտեզի 2 սան հանգույցների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքներ	3000.0
6	Թիվ 2 մանկապարտեզի համար գույքի ձեռք բերում	7470.0
7	Երաժշտական դպրոցի դահլիճի , պատուհանների և սան հանգույցների հիմնանորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքներ	300.0
8	Երաժշտական դպրոցի համար երաժշտական ձայնային սարքավորումների ձեռք բերում	4600.0
9	Մաիսի քաղաքային կենտրոնական գրադարան ՀՈԱԿ-ի համար գրականության ձեռք բերում	500.0

10	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ. Վարչական սարքավորումներ	192808.612
2019թ. Ընթացքում սուբվենցիոն ծրագրերով իրականացված աշխատանքների 5%-ի և անավարտ աշխատանքների շարունակության համար նախատեսվում է		
11	Մասիս քաղաքի 4, 5, 6, 7-րդ թաղամասերի գազիֆիկացման աշխատանքների շարունակություն	23071.1
12	5-10-րդ փողոցների լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների 5 %	1916.1
13	Թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքների 5 %	2074.3
14	Թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողություն	337.4
	Ընդամենը ծախսեր	***240 077.472***

2020թ համայնքի բյուջեի վարչական մասում անհրաժեշտ է նախատեսել հետևյալ ծախսերը՝

Նվազագույն աշխատավարձի մասին ՀՀ օրենքի կիրարկման արդյունքում անհրաժեշտություն է առաջացել բարձրացնել քաղաքապետարանի աշխատակիցների և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերը, որի արդյունքում աշխատավարձերի վճարման համար լրացուցիչ ծախսը կազմում է 68037,8 հազար դրամ, որից պետական բյուջեից փոխհատուցման գումարի չափը՝ 44 772.0հազար դրամ /ըստ կազմակերպություն-ների ֆիանսավորման չափի հաշվարկները կցվում է/: Քաղաքապետարանի աշխատակիցների համար բյուջեում նախատեսվում է պարգևատրում 7856.2 հազար դրամի չափով:

Անհրաժեշտ է ծախսերն ավելացնել բազմաբնակարան շենքերի տանիքների և նկուղների ընթացիկ նորոգման համար 5000.0հազար դրամով, փողոցների լուսավորության էլէներգիայի ծախսերը՝ 7000.0 դրամի չափով, սոցիալական հատուկ արտոնությունների այլ նպաստները՝ 2200.0 հազար դրամով, Մասիս ՍԲ. Թադեոս եկեղեցուն նվիրատվություն՝ 2000.0հազար դրամով:

Մաքուր Մասիս ՓԲԸ-ի գործունեությունը դադարեցնելու, աշխատողների վերջնահաշվարկների հետ կապված առաջացել են հարկային պարտավորություններ, որը մարելու համար անհրաժեշտ է ընկերությանը հատկացնել սուբսիդիա 3200.0հազար դրամի չափով:

Մասիսի կոմունալ տնտեսություն, բարեկարգում և բնակչության հատուկ սպասարկում ՀՈԱԿ-ի կողմից իրականացված ծառայությունների դիմաց վճարում

կատարելու համար անհրաժեշտ է բյուջեում սուբսիդիայի հովածով նախատեսված միջոցները տեղափոխել ծառայությունների մատուցման հոդված՝ ընդհանուր բնույթի ծառայություններով՝ 18990.1հազար դրամ, սան մաքրման ծառայությունների համար 35801.2 հազար դրամ, աղբահանության ծառայության համար՝ 25165.0 հազար դրամ:

Վերոնշյալ ծախսերը բյուջեում ներառելու և բյուջեի հաշվեկշվածությունն ապահովելու նպատակով բյուջեում նվազեցվել է նախատեսված որոշակի ծախսեր, մասնավորապես՝ ճանապարհների փոսային նորոգման ծախսերը նվազեցվել է 3000.0հազար դրամով, միջոցառումների համար նախատեսված միջոցները նվազեցվել է 3500.0հազար դրամով, Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց համայնքի կողմից կատարված ֆինանսավորումներից կազմակերպություններում առկա մնացորդների հաշվին նվազեցվել է հատկացվող սուբսիդիայի չափերը 14350.0 հազար դրամի չափով /հաշվարկները կցվում է/:

Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը նվազեցվում է 31422.0 հազար դրամի չափով:

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Լ. Աստաբացյան

Ֆինանսական բաժնի պետ՝ Ն. Սահակյան